

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ՄԱՐՏ 22, 1930

ԹԻՒ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՉՈՐԻ ԱՂՕԹԵՆՔ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԾՈՒՆՐ ԴԻՐ

ՍԿՈՎՏԱՑԻ ԿԻՆԸ ԻՆՉ ԳԻՏԵՐ

ՄՈՈՑԱԾ

ԴԻՍԿՆԵՐՈՒ ՆԱԻ ՄԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՀԱՍԿԵՆԱԼ ԱՌԱԿՆԵՐԸ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ԳՐԻՍՏՈՍ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐ. Յ. ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

ՌՇՏՈՒՆԻ

ԻՆՉՈՐԻ ՉԵՆ ՍԻՐԵՐ ԶԱՍՏՈՒԱԾ

ՎԵՐ. Ա. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՕԴ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹՄԻՆ

ԹՐԳ. Տ. Ճ. Խ.

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՂԷՃ» ՀԱՆԼԵՊ

ԲՈՒՈՐ ՍՈՒՐԻՏԵ ԵՒ ՆԳԻՊՏՈՍԻ
Ք. Ջ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Սիրելի բարեկամներ,

Պէջրութի Հայ Ք. Ջ. Ընկերութեանց Տեղական Միութիւնը այս տարի Ապրիլ 23-30 քաղաքիս մէջ գումարութիւնք Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան առնթիւ Ք. Ջ. Ընկերութեանց Պատգամաւորական ժողով մըն ալ գումարելու գաղափարը յղացաւ, որուն սիրով ընդառաջ գնաց Միութեան կազմակերպիչ մարմինը և խոստացաւ քաջալերել մեզ իրենց արամադրելի աւանդին միջոցներով այդ ձեռնարկին յաջողութեան համար: Ժամանակը եկած է կարծենք որ Ք. Ջ. Ընկերութիւններն ալ իրենց պաշտօնական ներկայացուցիչներով տարեկան համաժողովներ սարքեն Միութեան ժողովներուն առնթիւ, զիրենք հետաքրքրող նիւթերու շուրջ խորհրդակցութիւններ կատարելու և ասանկով աւելի սերտ կապ մը հաստատելու իրարու մէջ: Ծրագրուած ժողովը առաջինն է իր տեսակին մէջ և բնականաբար աւելի նախապատրաստական ձև մը պիտի ստանան անոր աշխատութիւնները, ապագային աւելի սերտ գործակցութեան և իրերօգնութեան համար: Այս անգամ մեր խորհրդակցութեան առարկայ պիտի ըլլան Ք. Ջ. Ընկերութեանց կազմակերպչական, նպատակին, գործունէութեանց Ծրագրի եւ Միթոտի վերաբերեալ խնդիրներ, ինչպէս նաեւ Ք. Ջ. Ընկերութեանց արզի վիճակը զանազան եկեղեցիներու մէջ և իր փոխ յարաբերութիւնները եկեղեցիին և նման ընկերութեանց հետ:

Ք. Ջ. Ընկերութիւնները եկեղեցիին անբաժան մասը կը կազմեն և կերպով մը ապագայ եկեղեցիին կը ներկայացնեն: Մեր բոլորին ալ նպատակը մէկ է. կապել երիտասարդութիւնը ՅԻՍՈՒՍԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՒՆ, ջանալ որ եկեղեցիին աւելի

մօտէն հետաքրքրուի իր երիտասարդ ոյժերով, և գործիք կանգնիլ մեր ոյժերու սահմանին մէջ եկեղեցական բոլոր ձեռնարկներու: Ահագին գործ կայ կատարուելիք մեր առջեւ, ահապին բաներ ունինք իրարմէ սորվելիք, և Ք. Ջ. Ընկերութեանց այս տեսակ համաժողովը կրնայ լաւագոյն ազդեցիկ ըլլալ իրարու քով գալով, համազորակցական հողի վրայ ընդհանուր ծրագրերն ի մշակելու մեր նպատակին հասնելու համար:

Ահա այս կարեւոր կէտերը նկատի առնելով է որ Պէջրութի Ք. Ջ. Ընկերութեանց Տեղական Միութիւնը կոչ կ'ուզէ բոլոր Ք. Ջ. Ընկերութիւններուն՝ Միութեան սահմաններէն ներս, զրկել իրենց ներկայացուցիչները այս համաժողովին և ջանալ որ այս տարի այս ձեռնարկը նոր դարազուլիս մը բանայ Ք. Ջ. Ընկերութեանց պատմութեան մէջ: Յուսով ենք որ մեր այս կոչը սիրով ընդունելութիւն պիտի գտնէ ձեր բոլորին քով և գուցէ ալ պիտի աջակցիք մեզի զայն յաջողցնելու: Համաժողովին կրնան մասնակցիլ բոլոր Ք. Ջ. Ընկերութիւնները, թէ՛ ազաոյց թէ՛ ազգական, իրենց ներկայացուցիչներով:

Շատ քիչ ժամանակ ունինք մեր առջեւ: Շարժինք արագ և բերենք մեզի հետ միասին մեր թելադրութիւններն ու խորհուրդները: Կազմակերպուինք, քանզի Քրիստոսն ու Եկեղեցին, կազմակերպուած երիտասարդ ոյժերու պէտք ունին և մենք յուսով ենք որ այս տարուան ժողովը պիտի օգնէ մեզի աւելի կազմակերպուած և յարձակողական ճակատով մը հրապարակ իջնալու Քրիստոսին և իր Եկեղեցիին համար:

Հրամայեք մեզի հետ միասին... Միութիւնը զօրութիւն է, և համազորութեան ժողովը «առտուած ոյժ»:

Պէջրութի Տեղական Միութեան
Ընդհանուր Քարտուղարութիւն

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, ՄԱՐՏ 22, 1930

ԹԻԻ 6

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՉՈՒ ԱՂՈԹԵՆՔ

Մեր կարծածէն շատ աւելի մեծ թիւով մարդիկ կ'աղօթեն, այս կամ այն ձեւով, կանոնաւոր կամ անկանոն կերպով: Մարդկային փորձառութեան խոր ուսումնասիրութիւնը կը ցուցնէ՝ թէ աղօթքը մարդուն համար բնական, կամ աւելի ճիշդը բնագոյնին է. քանզի մարդը, իրական կամ հոգեկան մարդը, և Աստուած ինքը նոյնացեղ էակներ են, որոնք չեն կրնար չհաղորդակցիլ իրարու հետ: Աստուած, տեւականօրէն տիեզերքի մէջ ներգործող Մեծ Հոգին, ամէն առիթ և ձև կը գործածէ տեսակցութեան համար մարդուն հետ. և մարդը, այս խորհրդաւոր հիւլէն, որուն մշտածաւալ հոգիին ամար աշխարհը սկսած է պղտիկ դալ, ներքին մղումով մը զրտակցաբար կամ անզրտակցաբար բազմազան միջոցներով կը բաղձայ, կը ճգնի տիեզերքի այս Մեծ Հոգիին հետ շփման դալու: Ինչ իրերպով ալ բացատրեն մարդկային ցեղին պատմութիւնը, ինչ անուն ալ տան անոր, անիկա էականին մէջ ուրիշ բան չէ՝ այլ միայն այս երկու հոգիներուն զիրար իրարու մէջ գտնելը. և պատմութեան մէջ նոր դարագլուխ մը կը կազմէ այն պահը՝ երբ խուզարկող, փնտռող հոգին նոր զիւտ մը կատարէ, կամ կորուսած ճշմարտութիւն մը վերըտին գտնէ Աստուծոյ մէջ: Ահա՛ թէ ինչո՞ւ աղօթքը, հոգիներու հաղորդակցութիւնը, անհրաժեշտութիւն մ'է մարդուն համար:

Ներկայիս, այսքա՛ն այլապան ձայ-

ներու ժխտին մէջ, այսչա՛փ բազմազան գոյներու այլանդակ համադրութեան մէջ, այսքա՛ն տարբեր հոսանքներու շրջափոխուցիչ թոհուբոհին մէջ, մենք աւելի քան երբեք պէտք ունինք աղօթքի, հաղորդակցելու Աստուծոյ հետ, գիմելու մեր Հօրը, որպէսզի կարենանք գտնել կամ վերստին գտնել այն ճշմարտութիւնը, որ մեր կեանքերը պիտի ընդարձակէ ու բարձրացնէ:

Շատ մը տարբերութիւններ, ցեղային, աշխարհագրական, բնախօսական, կրօնակրթական, ազգային—մարդերը իրարմէ կը գատեն: Այս տարբերութիւնները յաճախ ունին իրենց որոշ արժէքները, որոնք պէտք է անվթար պահուին, և որոնց համադումարը կը կազմէ ներդաշնակ ամբողջութիւն մը: Բայց մարդուն համար յաճախ փորձութիւն մ'է իրենէն դուրս բոլոր տարբերութիւնները անտեսել, չկարենալ գնահատել և իր որոշ սեպականութեան վրայ պնդել: Բոլոր արժէքները, տարբերութիւնները կարենալ ճշդիւ գնահատելու համար պէտք ենք Աստուծոյ աչքով վիտել գահոնք. ուստի պէտք ենք Անոր գիմել: Քանի մարդիկ իրարու նային և իրենցինը չեշտեն՝ իրարմէ պիտի հեռանան. քանի մարդիկ՝ պահելով հանդերձ իրենց ինքնատուութիւնները՝ Աստուծոյ մօտենան, այնչափ վերար լաւ պիտի հասկնան և իրարու պիտի նմանին: Բոլոր մարդերը կը միանան Աստուծոյ մէջ, ուր ամէն ձայն «Հայր» կը կանչէ, ուր ամէն գոյն սրբալոյս է, ուր ամէն հոսանք զէպի Անոր սիրտը կ'ուղղուի:

Ուրիմն աղօթե՛նք:

ՇՈՂԵՐ

ՅՈՒՆՐ ԴԻՐ

Փրոֆ. Ճորճ է. Սմիթ-ը որ մը Զուր-
ցերական Ալպեանները կը մտալցէր անոր
հովէն պատասպարուած կողմէն, հետե-
ւաբար ինքը և իր առաջնորդը չէին գի-
տեր որ սաստիկ հով մը կը փչէր: Ամե-
նաբարձր կէտին քայլ մը անայցած ա-
ռաջնորդը, որ առջեւէն կ'երթար, ետ
քաշուեցաւ իր սովորութեան համեմատ
և թողուց որ Փրոֆէսորը առաջին ան-
գամ գտագաթին վրայ ոտք կոխէ: Տր.
Սմիթ-ն ուստուսով մը վեր ելաւ, բայց
սաստիկ հովին պատճառաւ գրեթէ ետ
մղուեցաւ, առաջնորդը բռնեց անոր թե-
ւէն և ահանջին պոռաց «ծնրադրէ՛», հոս
այս սարին վրայ, մարդ կրնայ ապահով
լլալ այն ատեն երբ ծռնկերուն վրայ
նստի:» Ասիկա ճիշդ է նաև մեր երջան-
կութեան և փառքի գաղաթին վրայ
դառնալով պահուն, երբ կեանքը մեզի
համար հիանալի է: և աշխարհը՝ փառ-
քով լեցուն, մենք ապահով ենք երբ
ծռնը գնենք:

ՍԿՈՎՏԱՅԻ ԿԻՆԸ ԼՆՁ ԳԻՏԷՐ

Կին մը Սկովտիոյ մէջ եկեղեցիի մէկ
ժողովը դնաց, ուր իրեն շատ մը հար-
ցումներ եղան, բայց որոնց չկրնալով
պատասխանել հովիւը ըսաւ իրեն. «Կար-
ծեմ շատ յարմար կ'ըլլայ որ դուն այս-
ինչ երէցի կողմանէ ուսուցուիս մէկ եր-
կու ամսուան համար, և ապա հոս նորէն
գաս»: Կինը մինչ դռնէն կ'ելէր ըսաւ.
«Ոչ, այս բաներու մասին ես բան մը չեմ
գիտեր. բայց ես գիտեմ որ Յիսուս ինծի
համար մեռաւ և յիշուի, Տէր, ես ալ կ'ու-
զէի Անոր համար մեռնիլ:» Անոր վրայ
հովիւը դառնալով ըսաւ. «Բարի տիկին
ես եկուր, ես եկուր: Ես վերջապէս կը
հաւատամ որ այս մասին դուն մեր բո-
լորէն աւելի գիտես:»

ՄՈՌՅԱԾ ԹԷ ՆԱԽԱՃԱՇԱԾ ԼՐ

Մտազրազ հեղինակ մը առաւօտ մը
մոռնալով որ նախաճաշը ըրած էր, մի
քանի վայրկեան վերջ վերադարձաւ և
սպասուհիներուն հարցոց թէ ինչո՞ւ իր
կերակուրը այսչափ ուշ կը պատրաս-
տեն: Սպասուհիները խորհեցան թէ
իրենց տէրը կամ յիմարացած կամ յան-
կարձ հիւանդացած է, երբ անիկա պըն-
դեց թէ երբեք չէր նախաճաշած: Վեր-
ջապէս պնակները և հաւկիթի կեղեւները
մէջտեղ հանեցին, որոնք մարդը համո-
զեցին թէ ինք կերած էր: Քանիներ
Աստուծոյ բարիքները առատօրէն կը
վայելեն բայց ասոնք յաճախ կը մոռնան
Անոր նախախնամական սէրը և խնամքը:

ԴԻԱԿՆԵՐՈՒ ՆԱԻ ՄԸ

Մի քանի տարիներ առաջ Հիւս. Սա-
ուուցեալով օվկիանոսի մէջ կէտ ձուկ որ-
ոացող նաւ մը արգելափակուեցաւ սա-
ռոյցներու մէջ: Նաւապետը մօտակայ
ուրիշ եկրորդ նաւ մը տեսնելով բարի-
ւեցին գայն, բայց պատասխան մը չըս-
տացան: Քիչ վերջը տեսնելով որ նա-
ւէն սե է նշան մը չի տեսնուիր, խումբ մը
մարդիկ ծով իջան և սկսան գէպի հսն
թիւովարել: Երբ մօտեցան՝ նստին անց-
քին մէջ նստած մարդ մը տեսան, որ նա-
ւին օրագիրը կը բռնէր իր ձեռքին մէջ.
բարեւեցին բայց պատասխան չասին:
Անմիջապէս նաւ ելան և տեսան որ բոլոր
նաւաստիները նստած էին: Նաւին օ-
րագիրէն հասկցուեցաւ թէ այս նաւը 13
տարիներէ ի վեր այս սառոյցներու մէջ
կը շրջէր, զիականերէ բաղկացեալ իր բե-
ռը միասին կրելով: Արդեօք չկա՞ն եկե-
ղեցիներ, հոստատութիւններ որոնք այս
նաւին կը նմանին, երեւութապէս շար-
ժումի մէջ բայց մեռնիներու բանակ մը
կը պարունակեն և ոչ թէ կենդանի
քրիստոնեաներ:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՀԱՍԿՆԱԼ ԱՌԱԿՆԵՐԸ

Մօտերս՝ Կ. Դպրոցի դասերուն մէջ կ'ուսումնասիրէինք Թագաւորութեան մասին Յիսուսի առակները։ Այս դասերուն մէջ և խօսակցութեանց պահուն կարգ մը կէտեր երեւան ելան, զորոնք կ'ուզէինք այս յօդուածով ընդհանուրին ուշադրութեան յանձնել։

1. Առակ մը պատմուածք մըն է որ ուսուցանելու ատեն Յիսուսի երեւակալութեան մէկ ծնունդն է։ Անիկա տեղի ունեցած զէպք մը չէ։ Ասկէ քիչ առաջ պարբերաթերթի մը մէջ ակնարկութիւն մը կար, Բարի Սամարացիի Առակին մէջ յիշուած պանդոկի մասին, եւ կ'ըսուէր թէ պատմուածքը իրական զէպք մըն է։ Անիկա առակ մըն է, սակայն, և ոչ պատմութիւն մը։ Անիկա ճիշդ է բոլոր առակներու համար ալ։

2. Առակ մը մէկ կէտ կամ մէկ նշան պատակ ունի, անիկա խօսուած է մէկ գլխաւոր ճշմարտութիւն մը կամ գաղափար մը քաջատրեղու համար, ճիշդ ինչպէս որ մենք խնդիր մը լուսաբանելու համար պատմութիւն մը կը պատմենք։ Կրնայ պատահիլ որ պատմուածքը իր շատ մը մանրամասնութիւններով կըրնայ պարագային յարմարիլ, ասիկայ պատմուածքը պատմողին կարողութիւնը կը ցուցնէ։ Բայց մէկ նպատակ միայն ունի ան։ Եթէ պատմուածքը նոյն իսկ երկու նպատակով պատմուելու ըլլայ, անիկայ կը խօսուի նկատի առնելով նպատակը ոչ թէ մանրամասնութեանց կիրարկումը։ Ահա այսպէս Յիսուս իր առակները պատմեց իրականութիւնները եւ ճշմարտութիւնները լուսաբանելու համար։ Փորձութիւն մը կայ։ Անոր պատմուածքներուն ամէն մէկ մանրամասնութեան մէջ ծածկուած իմաստ մը գտնելու համար։ Այսպիսի փափաք մը

մարդերը առաջնորդած է Սամարացիին կողմէ պանդոկապետին տրուած երկու զահեկանին կամ մանանիսի ծառին ճիւղերուն վրայի թռչուններուն նշանակութիւնը գտնելու։

3. Երբ Յիսուսի մէկ առակը նկատի առնենք պէտք է յիշենք թէ հիմնական բանը պատմուածքը չէ, այլ հոգեւոր իրողութիւնն է զոր Յիսուս կ'ուզէ անով պատկերացնել։ Այսպէս, եթէ մենք պատմուածքին մէջ ուսուցուած ճշմարտութիւնը կը փնտռենք, մենք այս հոգեւոր հիմք պէտք է գտնենք և ապա մեր մտածումները պէտք է անո՛ր վրայ հիմնենք քան թէ առակի ձեւին վրայ։ Առակին մէջ ներկայացուած սկզբնական գաղափարը՝ Յիսուսի յստակօրէն տեսած հոգեւոր իրողութիւնն է պատմուածքի կը անցնէր, որով Ան կրնար ուրիշներուն մտքին առջև պատկերացնել զայն։ Պատմուածքը իր պաշտօնը կատարած կ'ըլլար երբ լսողը ըմբռէր ինչ որ Յիսուս տեսած էր։ Եւ լսողին մտածումը այսպէս յայտնուած իրողութեան վրայ պէտք էր կեդրոնանալ քանի ան խորհէր։ Բարի Սամարացիի առակին մանրամասնութիւնները շատ պատկերալից և գլորաւիչ են, սակայն մեր ուշադրութիւնը սիրով ծառայելու պարտականութեան վրայ պէտք է կեդրոնանայ։ Թաղուած գանձի պատմուածքը շատ մը հարցեր կը զրգռէ, բայց երբ գանձին տիրանանք՝ միտքն այն տալիս է որ այն գլուխը ուղիւն ուրախութիւնը կ'ունենանք։ Եւ այս է որ պատմուածքի կեդրոնը կը կազմէ։

4. Նոյն խորհրդանշանը ամէն առակի մէջ նոյն բանը չի նշանակեր։ Պատմուածքին պատկերը, իբր ամբողջութիւն առնելով, և նպատակը անոր նշանակութիւնը յայտնելու մէջ աւելի մեծ դեր մը կը խաղան։ Նոր կտակարանի մէջ յիշուած շատ մը առակներու մէջ խոր մտքի գործածութիւնը կ'արժէ իբր օրի-

նակ յիշել: Ասկէ ոչ շատ առաջ Ս. Գըրքի իբր խորունկ մէկ ճշմարտութիւնը սատեակէտը կը պաշտպանուէր. թէ խմորը միշտ գէշ սկզբունքի մը գործելը կը ցուցնէր, ինչպէս որ Պօղոս կ'ըսէ. «Բիշ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ:» Բայց Պօղոս յայտնապէս զայն կը գործածէ գէշ սովորութիւններու համար, իսկ Յիսուս՝ Արքայութեան մեծնալու համար: Պօղոս իր առակովը քրիստոնեաներուն կ'ազդարարէ որ խմորը արգիլեն գործելու: Յիսուս իր աշակերտները կ'ապահովցնէ թէ Արքայութեան խմորը պիտի գործէ մինչև որ բոլորը խմորի:

Ճ. Է. ՄԷՐԻՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԵՒ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

1.

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ

ԹԱԴԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ էր Յիսուս Քրիստոսի ներկայացուցած զազափարականը «Աստուծոյ Թագաւորութիւնը» բացատրութեան մէջ, և ի՞նչ էր զայն իրականացնելու կերպը:

Յիսուս պնդեց թէ աշխարհ եկած էր որոշ նպատակով մը, չոր կոչեց «Աստուծոյ Թագաւորութիւնը»: Աստուծոս իրէ սա համարները. — Մարկ. 1. 15, Մատթ. 4. 1-11, և պիտի տեսնենք 1. թէ Յիսուս աշխարհը կ'առավարելու մասին մասնաւոր ծրագիր մ'ունէր. 2. թէ այս ծրագիրը ժամանակակից հրեաներու ծրագիրէն հիմնապէս կը տարբերէր. 3. թէ այս նպատակին իրագործման համար Յիսուս նիւթական ուժերու չէր վստահէր, ոչ ալ զանոնք կը գործածէր:

Մեծ վարդապետը, Յիսուս, ուսուցանելու մէջ ալ մասնաւոր կերպ մ'ուն-

նէր: 1. Մարդոց մէջ ընթացիկ անձնական հարցերը լուծելու համար վճիռներ և կանոններ չէ տուած, ինչպէս որ ուրիշ առաջնորդներ կ'ընէին, քանզի գիտէր որ Աստուծոյ Թագաւորութիւնը յառաջդիմական բնոյթ ունէր. մինչդեռ կանոնները ժամանակի հետ միասին կը փոխուին. այս պատճառաւ սկզբունքներ ներկայացուց Ան. Ղուկ. 12. 24 լաւ օրինակ մ'է ասոր համար. մարդ մը Յիսուսէն կը խնդրէ որ ժառանգի բաժանման մասին վճիռ մը տրձակէ. Յիսուս կը պատասխանէ որ ինք զպիւրէնիւ չի նմանիր, թէ ժառանգի բաժանման համար իր սկզբունքն է ազահութենէ խուսափել: Ահա սկզբունք մը որ կը յարմարի ամէն մարդու, ամէն ժամանակի, ամէն քաղաքակրթութեան և չի հիննար: 2. Յիսուս այս սկզբունքները յաճախ պատմութեան քննարկ և առակներու ձևով կը սորվեցնէր: Ուստի առակներու մէջ այս սկզբունքները գտնել կարենալու համար պէտք է խոր և ճշգրիտ ուսումնասիրութիւն կատարել: Պէտք է պատմութեան ընդհանուր ուղղութեան համեմատ խնդրոյ առարկայ ըսկզբունքը գտնել առանց պատմութեան իւրաքանչիւր բառը նկատի առնելու: Չոր օրինակ, Ղուկ. 16. 19-31 ի մէջ շատ զբաւիչ պատմութիւն մը յիշուած է, որով Յիսուս կ'ուզէ սորվեցնել թէ մէկը պէտք է իր ձեռքը ունեցածները գործածել գիտնայ, մինչդեռ նախկին համարներու մէջ խորհրդակցութեան նիւթը հարստութեան մասին է:

3. Յիսուս բոլոր բարեկարգութիւններու վրայ վերէն, Աստուծոյ հայեացքով կը նայէր: Անիկա երբեք կարեւորութիւն չէր տար ժողովուրդին մտայնութեան համեմատ խնդիրը լուծելու կամ օրոժամնայ կերպով չարիքը խափանելու, այլ միշտ կը հարցնէր. «Անիկա Աստուծոյ առջև չիտա՞հ է, Աստուած ի՞նչ կ'ըսէ անոր:»

4. Յիսուս մարդկութիւնը բարեկարգելու համար ներսէն, սրտէն կ'սկսէր, և աստիճանաբար դէպի դուրսը և գործնականը կ'երթար: Անիկա կը սորվեցնէր թէ ազգէն առաջ կուգայ անհատին վերածնունդը, քանզի կը հաւատար որ սիրտն է կեանքի կեդրոնը: Անիկա ուրիշներուն նման ձեռք լուսաւով, զգեստ հագնելով, մազ կտրելով չէր սկսեր և ապա ներս չեր մտնէր:

5. Անիկա կը հաւատար ընկերութեան աստիճանական զարգացումին, զոր կարելի էր յառաջ բերել համոզումով, առանց բռնի ոյժի եւ վախի ազդեցութեան:

ԳՐԻՍՏՈՍԻ ՄՏԲԻՆ ՄԷՋ առաջին խնդիրը «Աստուծոյ Թագաւորութիւնն» էր: Անոր աշխարհ գալուն նպատակն էր, ինչպէս որ յիշուեցաւ, Աստուծոյ մտքին համեմատ աշխարհը փրկել որ մեղքին միջոցաւ կործանուած էր, եւ շիտակ ճամբան առաջնորդել մարդը որ Աստուծոյ արդարութենէն հեռացած էր: Յիսուս ասիկա «Աստուծոյ Թագաւորութիւնը» կոչեց, այսինքն բոլոր մարդերը — անհատաբար և հաւաքաբար — ընտանեկան, կրթական, եկեղեցական, քաղաքական եւ տնտեսական բոլոր կազմակերպութիւնները, Աստուծոյ կառավարութեան մէջ մտցնել եւ զանոնք Աստուծոյ կառավարել: Յիսուսի համար ամենահաճելի եւ իր ամէնէն շատ գործածած բառն էր «Աստուծոյ Թագաւորութիւնը», որ Աւետարաններու մէջ 109 անգամ յիշուած է: Այս պատճառաւ Առաքելական եկեղեցին ալ շատ կը գործածէ այս բացատրութիւնը, որ Գործք Առաքելոցի մէջ 8, Պողոսի թուղթերուն մէջ 15, Յակոբոսի մէջ 5, Պետրոսի մէջ 2, Եբրայեցւոյ մէջ 2, Յայտնութեան մէջ 5, ընդամենը 37 անգամ յիշուած է Նոր Կտակարանի մնացեալ մասերուն մէջ:

Այսու հանգերձ Յիսուս երբեք չէ սահմանած թէ ի՞նչ է Աստուծոյ Թագա-

ւորութիւնը, որուն համար որոշ պատասխանատուութիւն մը չես կրնար գտնել: Անիկա մեզի կը նկարագրուի իբր փառաւոր վիճակ մը որ անպատճառ պիտի իրականանայ, երբեմն իբր գաղափարական մը, երբեմն իբր ապագայի մէջ իրականալի կառավարութիւն մը: Կարդա՛ Ղուկ. 17. 20-21, Մատթ. 5. 3 և 13. 44-46, Կալ. 6. 22, Հռովմ. 5. 1-4:

Մատթ. ԺԳ. զլխի և Մարկ. 26-28 մէջ յիշուած չորս գոյգ առակներու մէջ շատ լաւ բացատրուած է «Աստուծոյ Թագաւորութեան» բնոյթը, ոյժը, մարդկային կամքին հետ անոր զուգընթացութիւնը, բայց վերջապէս անոր փառաւոր կատարելութեան մը մէջ յայտնուումը:

Առաքեալները զիստերապէս երկու առումով կը գործածեն «Աստուծոյ Թագաւորութիւնը» բացատրութիւնը: Ա. Ներկայիս անհատական և մարդկային վիճակ մը: Բ. Ապագային Նոր Երկինքի և Նոր Երկիրի վիճակը և օրհնութիւնները. Ա., Թես. 2. 12, Բ. Տիմ. 4. 18, Բ. Պետ. 1. 11:

Դարձեալ, Առաքելական եկեղեցիի մէջ շատ ուշադրաւ են հետեւեալ երկու կէտերը: Նախ՝ անոնք կը խորհին թէ «Աստուծոյ Թագաւորութիւնը» շատ մօտ ապագային պիտի իրականանայ: Նոր Կտակարանի մէջ 300 անգամէն աւելի կը յիշուի այս:

Երկրորդ՝ Առաք. եկեղեցին անմիջապէս սկսաւ ընկերային ծառայութեան և նոր եկեղեցիներ կազմուեցան: Եղբայրութեան ընկերային ծառայութիւններուն կարեւորութիւն տրուեցաւ: Գիւրութեան ջնջումը, ամուսնութեան եւ ամուսնալուծման հարցերը ուսումնասիրուեցան:

* * *

Աստուծոյ Թագաւորութեան կանոնները: Աստուծոյ Թագաւորութեան քաղաքացիներուն քրիստոնէական կեանքը

արտաքին կանոններով չի կառավարուել: Անիկա յառաջ կուզայ Ս. Հոգիին մարդուն մէջ բնակելովը, և մարդուն զԱստուած գոհացնելովը: Հոգ. 8. 9 և 14-13, Բ. Կորն. 3. 6, 5. 14:

Այս աստուածային կեանքը որ մարդոց հոգիին մէջ կը գտնուի, երկար պարեռու միջոցին այս մարդերու մէջ գործելով կրօնական և բարոյական կանոններ յառաջ եկան: Այս կանոնները անշուր են աստուածային կեանք ստեղծելու համար, բայց պաշտօնականներ, չափանիշի և առաջնորդի ծառայութիւնը կը մատուցանեն: Հոգ. 8. 3, Մատթ. 5. 3-9, Հոգ. 6. 1-14: Ահա այս աստուծով անոնք կը կոչուին Աստուծոյ թագաւորութեան կանոնները:

Լերան Քարոզը, Մատթ. 5-7 գլուխներ: Յիսուս (Ք. Վերջ) 28 թուականին երբ իր փառքին գաղաթնակէտը հասած և 12 առաքեալները ընտրած էր, քարոզի մը ձեռով իր վարդապետութեանց ըսկզբունքները ներկայացուց:

1. Թագաւորութեան քաղաքացիները, անոնց նկարագիրը և պարտականութիւնները. 5. 1-16:

2. Նոր Կտակարանի Հինին հետ ունեցած յարաբերութիւնները 5. 17-48:

3. Աստուծոյ Թագաւորութեան կրօնքին հիմնական սկզբունքները. 6. 1-34: ա. Բարի վարք Աստուծոյ նկատմամբ (6. 17-34) և բ. մարդոց նկատմամբ (7. 1-12):

4. Վերջաբան. 7. 13-27:

ա. Թագաւորութիւնը մտնել զըստար է:

բ. Թագաւորութեան չափանիշը ի՞նչ է, այլ գործք է. 7. 16-23:

գ. Անհատներու կամ ազգիին գոյութեան շարունակումը կախիսալ է Աւետարանի հնազանդելէ 7. 24-27:

Ամփոփելով կ'ըսենք. — Աստուծոյ Թագաւորութեան հիմնական կանոնները երեք են: Թէ Լերան Քարոզին մէջ և թէ

բոլոր Նոր Կտակարանի մէջ քրիստոնէական կեանքի համար կանոններ կամ ըսկզբունքներ կան: Կեանքի գոյանալուն և անոր շարունակումին համար կանոններ:

1. Սիրոյ կանոնը, Մատթ. 7. 21-23, Հոգ. 13. 8-10, Ա. Կորնթ. 13. 1-3:

2. Ծառայութեան կանոնը, Քրիստոս օրինակ է. Յովհ. 13, Ղուկ. 22. 27:

3. Զոհողութեան կանոնը, սիրոյ և ծառայութեան լրացումը:

Յիսուս այս երեք կանոնները խոսցուց Ոսկեղէն Կանոնի մէջ:

Հանդէս ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՐԲԱՆ
(Շարունակելի)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

5. Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

6. Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ա.

Անկարելի է Աստուծոյ նախախնամական ձեռքերով միացուած այս երկու երանելի գործիչներու կեանքին ու գործունէութիւնները իրարմէն ջատագոյնել: Երբ որ պիտի ջանանք համընթացաբար քալել անոնց արդէն զուգահեռական ընթացքին հետ:

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ դարձը կերտեցին, ոսկի անունով, գոհար արտադրութիւններով և ազամանդի տուկունութիւնով. Հայ Ոսկեղարձ որ ոչ միայն հայ՝ այլ օտար ազգերու բանասէրներուն համար ալ հետաքրքրական ատաղձներով աղագծուն դար մը եղած էր, դա՛րձ իսկական հայ վերածնութեան՝ ազգային և կրօնական տեսակէտներով: Դիւրացնելու համար անոնց այդքան բազմազգաւ և բազմաբնակ կեանքերուն ուսումնասիրութիւնը, հետեւեալ երեք մասերու կրնանք բաժնել զայն:

1. Մագում և անհատական կեանք:

2. Գործակցական կեանք և ազգային անցյուղարձեր:

3. Կրթական, գրական և կրօնական կեանք:

1. Ծագում և Անհուսական կեանք: Ս. Սահակ Պարթև: Մեծն Ներսէսի զաւակն էր, բայց Լուսաւորիչի սերունդին չարունակութիւնը կասած է իրմով, որովհետեւ Ս. Սահակ՝ այդ փառապանծ ճիւղին վերջին շառաւիղը կ'ըլլայ, չ'ունենալով մանչ զուակ մը, շարունակելու համար ժառանգական յաջորդութիւնը լուսաւորչեան գահուն: Լուսաւորիչ—Արիստակէս—Վրթանէս—Յուսիկ—Փառէն Մեծն Ներսէս—Յուսիկ Բ.—Զաւէն Շահակ—Ասպուրակէս—Ս. Սահակ գծով կը վերջանայ այդ յաջորդութիւնը: Ս. Սահակ շատ մտահոգ էր այս գտարիւն գերդաստանին այսպէս մարելուն համար, բայց չէր գիտեր թէ բարին Աստուած ուրիշ կերպով մը պիտի յաւերժացնէր իր գերդաստանին լուսաւոր անունը, Ս. Սահակի աղջկան Սահականոյշի միջոցով, որը ամուսնանալով Համապասպ Մամիկոնեան—հայ նախարարին հետ, ծնաւ հայաշխարհի մեծագոյն հերոսը՝ Հայ կրօնի վսեմագոյն պաշտպանն ու պատարագը—Մեծն Վարդան Մամիկոնեանը, Արեւելքի մէջ քրիստոնէութեան մեծագոյն ախոյեանը:

Ս. Սահակ յունական գոստիարակութիւն մը ստացած ըլլալով յունասիրական միտումներ կը տածէր, զորս պաշտպանած է իր կեանքին մէջ, երբ առիթը ներկայացեր է: Իր ծննդեան թուականին շուրջ տարակարծութիւններ կան, բայց հաւանաբար 350-351ի տարիները ծնած ըլլալու է: Իր անհատական կեանքին ամէնէն յատկանշական զէպքն է Տեսիլը՝ զոր իր երկրորդագործութեանը առաջին տեսած էր, Վաղարշապատի եկեղեցիին մէջ, Աւագ Հինգշաբթի գիշեր մը: Այս տեսիլքին մէջ Ս. Սահակ՝ ամպեղէն հսկայ բեմի մը վրայ խորան մը կը տես-

նէ, ճերմակներու մէջ պարուրուած, որուն ծայրը խաչ մը կը շողշողայ եւ սեղանի մը վրան ալ հաց ու խաղողի ողկոյց մը, քովն ալ եպիսկոպոսական ըզգեստներ: Ասոնց մէջ դրուած էր նաեւ մագաղաթ մը, վրան ոսկեգոյն գիրերով: Յանկարծ խումբ մը մանչ ու աղջիկ փոքրիկներ կ'երեւին, որոնք անուկընկալօրէն կ'երիտասարդանան և թեւեր ստանալով սեղանին վրայ կ'ըլլեն և զէպի երկինք կը վերանան: Այս տեսիլքը կը պատահէր՝ երբ Ս. Սահակ սարկաւազ մըն էր տակաւին: Տեսիլքին համար աւելորդ է ըսել որ ազգայն զէպքերու որոշ մի գուշակութիւնն էր, որոնց պիտի անդրադառնանք վերջերս: Ս. Մեսրոպ Մաշտոց: Տարօնի Հացիկ գիրքէն Վարդանի զաւակն էր բայց իր ծագումն ալ ազնուական գերդաստանէ մը կարծողներ աւելի շատ են, նկատելով որ՝ հասարակ մէկը չպիտի կրնար այդքան բազմակողմանի և ճօխ դաստիարակութիւն մը ստանալ, զոր կը տեսնենք Ս. Մեսրոպի վրայ: Հմուտ էր յունարէնի, պարսկերէնի և ասորերէնի: Ծննդեան թուականը որոշապէս չենք գիտեր, բայց կը հաւատաստուի որ աշակերտած է Մեծն Ներսէսի և անոր ազգային ու կրօնական շունչէն հզօրապէս ազդուած: Մեծն Ներսէսի մահէն վերջ անցած է արքունական պաշտօններու և շուտով բարձրացած արքայական քարտուղարի կամ դիւանապետի դիրքին: Ասիկայ որոշ ապացոյց մըն է իր ուշիմ, պարտաճանաչ և գնահատող ոգիին:

Պետական պաշտօններով հայ գաւառները շրջելու տալիս՝ սրտի մորմոքով տեսած է ժողովրդեան խոր տգիտութիւնը, հետզհետէ քայքայուելու վրայ եղող ազգային և կրօնական կեանքը, հայ գրի չգոյութեան պատճառով հայրենի կորուստի գատապարտուելու վտանգը, եկեղեցիներու մէջ ասորերէնով կարգացուած Ս. Գրքին շատերու

անհասկնալի ըլլալու պարագան և այն և սկսան խռովել իր հոգեւոյն խորերը անթեղուած կայծերը: Ալ հանգիստ չէր կրնար ընել. տարիներու այս տագնապալի և սեւեռուն խորհրդածութիւններէ վել չկ'որոշէ լքել իր այդ փառաւոր պաշտօնը զինուորական՝ և կղերականի հազուադէպ հագնելով Գողթն ու Սիրահաց գաւառները կ'շտապէ: Հոն կ'սկսի ասորերէն բնագրէն կարգաւ Ս. Գիրքը և հայերէնով բացատրել հայ գեղջուկին: Իր զգացած անդրանիկ հոգեկան զգացումն էր այս որ ծնած էր անշահախնդիր և անփառատենջ ողիէ մը, մինչ իւրին տեղ շատ ուրիշներ՝ պիտի նախընտրէին պալատական չուքն ու տիաղոսները և երբեք պիտի չբաժնուէին տնոնցմէ, ծառայելու համար ժողովրդին հոգեւոր բարձրացման նպատակին: Ահաւասիկ առաջին պատգամը՝ Ս. Մեսրոպէն մեզի հասնող:

Տարիներ կ'աշխատի այսպէս, հեւ ի հեւ, ջերմեռանդ հաւատքով և անսպառ եռանդով խանդավառ, բայց... տակաւին կ'ալեկոծէր իր հոգին... տակաւին կը տանջուէր իր էութիւնը... արդեօք, արդեօք կարելի չէ՞ր հայերէն գիրեր հնարել և Ս. Գիրքը, աղօթքները, հոգեւոր երգերը հայերէնի թարգմանել և հայ ժողովուրդին ապա որ կարգայ, հասկընայ և ապրի անով... Ահա իր հոգին խռովող երազը, իր տեսլականը, որ յամառ ողիի մը պէս զինքը կը հետապնդէր, չէր թողուր որ հանգչի, չէր թողուր որ քնանայ, կազդուրուելու համար իր յոգնատանջ ցերեկներու վատտակէն: Վերջապէս՝ կը դիմէ օրուան հալածապետին՝ Ս. Սահակի, կը պարզէ իր հոգեկան անհանդարտ վիճակը, կը ներկայացնէ իր մտահոգութիւններն ու հետապնդած պաղափարականը և հոն՝ չորս ծունկեր կը խոնարհին Արարչին առջև և չորս ձեռքեր կը բարձրանան զէպի Անոր Գահոյքը... և Աստուած կ'օրհնէ անոնց այս

սրտակից նուիրման ուխտը, հայ գիրը հնարելու համար: Ասկէ վերջ անոնք ալ մէկ հոգի էին և այդ՝ մինչև իմահ:

Յաջորդով պիտի տեսնենք զիրենք ազգային քաղաքական կեանքի ասպարէզին վրայ՝ իրրեւ գործակիցներ և լրծակիցներ նոյն ուխտին:

Հաղպ

ՌԵՏՈՒՆԻ

(Ճարուհակեղի)

ԵՐԲԵՄՆ ՄԱՐԴԻԿ ԻՆՁՈՒ

ՁԵՆ ՍԻՐԵՐ ԶԱՍՏՈՒԱՅ

Քարոզիչ, հովիւ եւ քաղաք հոգեւորներուն

Մենք հովիւ և քարոզիչներս երբ բնմէն եկեղեցին լեցուած տեսնենք կ'ուրախանանք, բայց երբ մի քանի ծեր և անուս անձերէ զմեզ շրջապատուած զրտնենք յուսահատելով՝ արդեօք երիտաւարները և կրթուած դասակարգը ու՞ր են, միթէ անոնց Աւետարան չի՞ քարոզուիր, ո՞ր ինչո՞ւ... Ըսելով խոր մտածութեան մէջ կ'ընկղմինք:

Վերլիչեալ հարցումներուն՝ մանաւանդ մեր նիւթը եզոզ հարցման պէսպէս պատասխաններ կրնան տրուիլ, բայց մենք հոս երկու կէտերու վրայ պիտի ծանրանանք:

1. Պողոս Առաքեալ մինչ Կորնթոսի եկեղեցիին կը գրէ՝ կ'ըսէ. «Ձեզմէ ոմանք Աստուծոյ գիտութիւնը չունին», (Ա. Կորնթ. 15. 34):

Այո՛, այսօր մեզմէ շատեր ալ Աստուծոյ մասին պէտք եղած գիտութիւնը չունին, անոր համար չեն կրնար սիրել Զայն:

Այս լուսաւորեալ դարուն՝ մինչ մարդիկ գիտութեան ովկիանին մէջ կը լողան, ցաւալի է ըսել որ շատ մը գիտուններու Աստուծոյ մասին ունեցած տեղեկութիւնը շատ թերի է: Միւս կողմէն կան շատ ազէտ եւ անուսներ որոնք Աստուծոյ կարողութեան, սրբութեան, շնորհաց եւ սիրոյ մասին ազէտ

ըլլալով անոնք եւս չեն սիրեր զԱստուած :

2. Մարդոց զԱստուած չխօրհելուն ամենամեծ պատճառներէն մին ալ շատերուն՝ զԱստուած չհասկնալնն է կամ սխալ հասկնալնն է : Ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս հիմա ալ շատեր Աստուծոյ մասին նախապաշարեալ են, ասոնք զԱստուած իբր անիրաւ հարստահարիչ մէկը նկատելով հետեւեալ պատճառաբանութեամբ կ'աշխատին իրենք զիրենք չբմեղացնելու : — «Ձարին թոյլ տալով՝ երբ պզտիկ ազգերը մեծերուն ճանկին մէջ ճգմել կուտայ, երբ ումանք հարուստ եւ ումանք աղքատ ու հացի կարօտ կ'ընէ, երբ շատերը պալատներու մէջ կը նստեցնէ միւս կողմէն շատերն ալ անապատներու մէջ պտտցնելով կը մեռցընէ, մէկ խօսքով, երբ անխիղճ եւ իր օրէնքը հղձաճող մէկ ազգը կը բարձրացնէ, իսկ իրեն հաւատացող ազգերն ու անձնաւորութիւնները կը կործանէ, այդպիսի Աստուած մը ո՞վ կը սիրէ : » Լաւ գիտնանք որ երբ այս ու ասոնց նման հարցումներու պատասխան չի տրուիր, երթալով Աստուած չսիրողներ պիտի շատնան : Եթէ չիտակը պիտի խօսինք մենք կրօնի առաջնորդներս, վերոյիշեալ հարցումներու գոհացուցիչ պատասխաններ տալու ի վիճակի չենք, մեզմէ ումանք ճշմարիտ պատասխաններ տալ չեն ուզեր, իսկ ումանք ալ անոնց պէս կը խորհին, մեզմէ շատեր ալ «Աստուած այսպէս ուզեր է, մենք Անոր միտքը չենք կրնար հասկընալ» ըսելով գործը կը լմնցնենք : Այսպէսով խնդիրը անլուծելի կը մնայ եւ երիտասարդը եւ կամ ով որ է զԱստուած թշնամի կարծելով Ձայն սիրելէ կը դադրի :

Հինգ տարի առաջ Կորնթոսի մէջ Near Eastի Որբանոցին ուսուցիչներէն մէկուն «Տրոտսնը» Սեւանիկի «Սիւք» պարբերաթերթը հրատարակեց. Աս-

տուծոյ դէմ գրուած այդ «հայհոյանք»ը կարգացող ամէն մարդ կը զողար, պատճառը... քանզի պարոնը իր թեկնածուն կորուսեր է, վասն այնորիկ «Անխիղճ, անիրաւ, անգութ, դաւաճան» կը կոչէր զԱստուած :

Նոյնպէս երկու տարի առաջ իր հօրեղբայրը կորսնցնող երիտասարդ մը քարոզիչին «Աստուծոյ յուսանք» մխիթարականին ի պատասխան «Աստուծոյ յուսացինք եւ այս վիճակին հասանք» պատասխանելով՝ Աստուծոյ հանդէպ ունեցած իր ատելութիւնը յայտնեց :

Այսպիսիներուն Աստուծոյ մասին ունեցած սխալ գաղափարները եթէ ճշմարտութեան ջահովը չլուսաւորուին չեն կրնար սիրել զԱստուած : Դիցուք թէ, ազգ մը կամ մէկ մը, բնական բայց անսկնկալի մը առջեւ կը գտնուի՝ այդ դժբաղդութիւնը Աստուծմէ իրեն զրկանք մը նկատելով կ'սկսի զայն սիրելէ դադրել : Այս եւ ասոր նման եղիլութիւններ մեկնուելու են, Աստուծմէ՞ են թէ ոչ ուրիշ տեղէն, եթէ Աստուծմէ են ինչո՞ւ եւ ինչպէ՞ս եկած են : Երիտասարդի մը անօրէն կեանք ապրելով երիտասարդ հասակին մէջ մահանալը, այսինչ մարդուն օդի սիրահար ըլլալով, անոր զաւակներուն թշուառութեան մէջ մեռնիլն եւ կամ իրեն այդ անարդ վիճակին մէջ մեռնիլը վերջապէս մեղքի եւ անզգուշութեան արգիւնքը հղող ամէն վաղածամ մահերու համար «Աստուծոյ կամքն» են ըսելով եթէ ամէն բան Աստուծոյ վերապրենք մարդոց Աստուծոյ հանդէպ արձակողական զիրք բռնելը երբեք չպիտի կրնանք արգիլել :

Ո՛չ, ո՛չ, զԱստուած սխալ չհասկընանք, եւ ոչ ալ սխալ հասկցնենք Աստուծոյ մեր մասին ըրած կարգադրութիւնները աղէտալի կարգադրութիւններ չեն այլ օգտակար : Լաւ գիտնանք որ «Սէր» հղող Աստուած, ազգի մը

թշուառութիւնը, իսկ միւս ազգին բարձրացումը չ'ուզեր: Հայր եղող Աստուած՝ մէկ զաւակը աղքատութեան եւ չքաւորութեան մէջ, իսկ միւսը հարստութեան մէջ տեսնել չ'ուզեր: Աստուծոյ սրբութեան չի վայելեր որ «սղ Աստուած դուն յաջողցու՛ր» ըսելով գողանալու վազող գողին յաջողութիւն տայ:

Աստուած սխալ կը հասկցուի, եւ ասոր ամենամիծ պատճառը մենք հովիւներս եւ քարոզիչներս կրնանք ըլլալ: Տէրոջը խօսքը շիտակ մեկնելու ենք, Սուրբ Հոգիին լոյսին տակ չ'մեկնուելիք տեսիլ եւ կամ բան չկայ:

Մարդիկ հաւատացած Աստուածին գիտնալ եւ սիրել կ'ուզեն, շատեր տեսնելէ հաք սիրել կ'ուզեն զԱստուած, ցուցնենք անոնց զԱստուած. եթէ չենք կրնար ցուցնել, մարդիկ երեւակայական Աստուած մը հազիւ այսօր կրնան սիրել: «Աստուած սէր է», «Աստուած ամէն տեղ է», «կ'ըսենք, բայց մարդիկ

երբ իմուքու մէջ չ'տեսնեն զԱստուած չեն կրնար սիրել զԱյն: Եթէ կ'ուզենք որ մարդիկ սիրեն զԱստուած, իմ եւ քու հետ հոգեկան յարաբերութիւն ունեցող Աստուծոյ՝ սիրող եւ ներող հայր մը ըլլալը հոչակենք:

Արդ՝ մեր աշխարհի ցոյց տալիք Աստուածը, Յիսուս Քրիստոսի Աստուածը ըլլալու է:

«Սիրեցէք», բայց Քրիստոսի սէր եղող հայր Աստուածը փառգնեմ:

Երբ մարդոց հասկցնենք թէ Աստուած չարին յաջողութեան, ահեղ պատերազմի, մեղաւորին վաղահաս մահուան, անէծքի եւ հեղգութեան մէջ գործ չունի, բայց միւսնոյն ատեն բնութեան մէջ զրուած իր ներդաշնակութեան եւ սիրոյ օրինաց մէջ մարդկութեան երջանկութիւնը փնտռող երկնաւոր հայր մըն է, զստահ ըլլանք որ այն ատեն մարդիկ պիտի սիրեն զԱստուած:

Քեսապ-Քեօրթլուէ Ա. Կ. ՊէրՊէրեան

ՕՐ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Հ. Կ. - Նոյ. - Դեկ. - * Յնվ. - Փետր. - Մարտ. - Ապր. - Մայ. - Յուն. - * Յուլ. - Օգոս. - Սեպ.

The American Magazine թերթին մէջ այս նիւթին շուրջ հրատարակուած յօդուածէն քաղուած արար թարգմանելով ընթերցողներուն կը ներկայացնենք:

Մ. Թրգմ.

Յօդուածագիրը կ'ըսէ թէ ամէն ամսուան մէջ մարդկային առողջութիւնը նոյն վիճակը չի ցուցներ, ունենալով իր ելեւէջները եւ այսպէս կազմելով կոր գիծ մը, որ ունի իր կատարելութեան սարը եւ անկուսի խորունկ ձորը:

Յունվարի մէջ առողջութեան այս կոր գիծը միջին բարձրութեան վրայ կը

գտնուի, եւ յաջորդ ամիսներուն միջոցին, — Փետրուար, Մարտ, եւ Ապրիլ — գիծը շարունակարար վար կ'իջնայ, այնպէս որ Ապրիլի վերջին շաբաթը իր ամենացած գիրքին վրայ կը գտնուի: Այս շրջանին մէջ է որ մանրէներէ վարակումները եւ մեր առողջութեան դէմ ուրիշ յարձակումները մեր մարմինները շատ տկար կը գտնեն իրենց դէմ պայքարելու համար: Մայիսի սկիզբը սակայն գիծը կը բարձրանայ եւ Յունիսի կէսին իր Յունուարի գիրքը կը վերստանայ, այս կը նշանակէ թէ մարմինը դիմադրի-

լու ոյժը նորէն միջին աստիճանի վրայ կը գտնուի: Բայց վերելքը կը շարունակէ, մինչև որ առողջութեան գիծը Օ-գոստոսի կէսին կամ Սեպտեմբերի սկիզբը իր տարեկան շրջանին ամենաբարձր գագաթը կը գտնուի, երբ մեր մարմինը առաւելագոյն չափով առողջապահութեան պահեստի ոյժ կ'ունենայ և երբ կ'արժես ոչ մէկ բան կրնայ հիւանդացնել մեզ, և բոլոր միջրոպները մեր առողջութեան անգրաւելի ձիւրալթարին առջև նահանջիլու կը պարտադրուին: Եւ ապա դարձեալ կ'սկսի անկումը: Նայէ վերի պատկերին:

Մեր առողջութիւնը կրնանք լաւագոյն վիճակի մը մէջ պահել, ամսուան պահանջներուն համեմատ առողջապահական կանոններու հպատակելով:

Առողջապահական կանոններ տարուան իւրաքանչիւր ամսուան համար:

ՅՈՒՆՈՒՍ.— Աստիճանաբար ինքզինքդ վարժեցուր բարեխառնութեան աւելի ցած աստիճաններուն սենեակներու մէջ: Սենեակի տաքութիւնը միշտ Ծարէնայթ 70, նոյնիսկ 68 աստիճանի վրայ պահէ, սակէ աւելի տաքութիւնը քեզ կը թուլցնէ և մորթդ ծուլութեան կը վարժեցնէ: Օրը երկու երեք անգամ պատուհանները բաց և սենեակները պղծացուր: Առտուն և իրիկունը պաղ օդին մէջ պտոյտներ ըրէ, խոր չունչ առնելով առանց աճապարանքի: Ամառ և ձմեռ նոյն ծանրութեամբ ներքին հագուաներ գործածէ: Շատեր պէտք եղածէն չառ աւելի հագուաններ կը հագնին, նոյն իսկ երբ բացօթեայ տեղեր պտոյտ կատարեն: Աւելի քիչ հագնելու աշխատէ, այնպէս որ մորթդ իրական ցնցումի ենթարկուի, պաղ օդի լողանքը պաղ ջուրի լողանքէն աւելի լաւ է: Բոլոր գաղափարը սակէ կը բաղկանայ, մարմինդ մանաւանդ մորթդ պոսպնիկ պաղառութեան դէմ հակադդելու համար: Այն մարդիկ որոնց մորթերը

տնկարող կամ ծոյլ են՝ պաղ կ'առնեն, անմարտողութիւն կ'ունենան, օդի հոսանքներու մէջ քնանալնուն և նստելնուն պատճառաւ ուրիշ հիւանդութիւններէ կը տառապին: Բայց ասիկա օդի մէկ յանցանքը չէ, յանցանքը իրենց է որ չեն թողուր որ օդը իրենց մարմինները մարզէ:

ՓԵՏՐՈՒՍ.— Ենթադրենք որ դուն ձմեռը սկսար առողջապահական միջակ ոյժերով, որոնց հակումը դէպի վար է: Հետեւաբար կարելի եղածին չափ պէտք է զգուշանաս վարակումի պատահականութիւններէն: Զմեռնային և զարնանային պաղառութիւնները, նշագիւղձի հիւանդութիւնը (թօնսիլիթիա) ինֆլուէնցա, թոքատապ (նէօմօնիա) ֆիզիկական շփումներու կամ միջրոպով վարակեալ օդի միջոցաւ կը փոխանցուին: Հետեւաբար բազմութեամբ խոնրած տեղերէ և մանաւանդ հագացող, փռզտացող մարդերէ հեռու կեցիր: Երբոր պաղ առնես անմիջապէս բժիշկիդ դիմէ:

ՄԱՐՏ.— Եթէ Յունուար ամիսը պաղ օդի լողանքի կանոնաւոր վարժութեամբ սկսար՝ վախճալու քիչ պատճառ ունիս այս յարափոփոխ ամիսէն: Յիրուի այս օդի փոփոխութիւնները քու մարմնիդ նպաստաւոր պիտի ըլլան, պայմանաւոր կատարելապէս պաղելու չափ ծայրայեղութիւններէ զգուշանաս: Միակ յոռեգոյն բանը, զոր «Անհաճելի» օդը քեզի համար կրնայ ընել սենեակի մէջ բանտարկուած պահելն է: Դուրս ել և բաց օդի մէջ մարզանքներ ըրէ՝ աշխուժով: Երկար պտոյտներ ըրէ, խոր չունչեր առ և Փետրուարի նախազգուշութիւնները շարունակէ:

ԱՊՐԻԼ.— Մարդերու առողջութիւնը այս միջոցին իր ամենացած աստիճանին վրայ կը գտնուի, թէպէտ Ապրիլեան ծանրը հիւանդութիւններու հիմը տարուան սկիզբը կը դրուի սովորաբար: Ապրիլը կարելի է կոչել հիւանդութեան վերա-

կրկնումներու (ընկեր) ամիսը: Հիմա առհն է կրցածիդ չափ արեւի լոյս առնենելու, քանզի արեւի անդրամանիշակագոյն ճառագայթները, որոնցմէ քաղաքի բընակչութիւնը գրկուած էր ձմեռուան մութին եւ մշուշին պատճառաւ, կ'սկսին մեր մթնոլորտէն ներս թափանցել: Մըտքիդ մէջ պահէ որ Ապրիլ եւ Մայիս ամիսուան մէջ մէկ օրուան արեւի լոգանքը, Օգոստոսի մէջ եղածէն շատ աւելի օգտակար է առողջութեան համար, այսպէս երբ առիթը ունենաս միշտ ինքզինքդ արեւի ճառագայթներուն բնթարկէ:

ՄԱՅԻՍ.— Այս ամիսը շատերուն համար հանգստանալու շրջանն է. բայց անոնց համար որ իրենց կենսաոյժերը չափազանց աշխատանքով կամ ուրիշ կերպով տկարացուցած են, նեղութեան ամիսն է: Քնատութեան, խթէրիայի եւ ընդհանուր դիւրագրգռութեան դէպքերու թիւը կ'աւելնայ: Շատ քալէ, երբոր առիթը ունենաս գիւղ գնա՝. նաեւ աշխատէ ամառնային հազուատներդ սովորական ժամանակէն քիչ մ'առաջ հագնելու:

ՅՈՒՆԻՍ.— Այս ան ամիսն է երբ ամառնային արեւի լոգանքի հիմը պիտի դրնես: Շարժուան վերջը լոգանքի հազուատը հագիր եւ որչափ որ քեզի համար կարելի է լոյսին ենթարկուէ. աս ուէ յարմար արեւոտ տեղ մը կրնայ ըլլալ: Բայց սա կէտին ուշադրութիւն ըրէ. եթէ արեւը քեզի համար շատ տաք կուգայ՝ առաջին անգամ կռնակդ եւ ուսերդ ենթարկէ անոր, շատ երկար ատեն անոր ենթարկուած մի կենար. սաստիկ արեւակիղութիւնը բարիքէն աւելի վնաս կը պատճառէ:

ՅՈՒԼԻՍ.— Եթէ Յունիսի մէջ իրական արեւի լոգանքիդ սկսիր եւ արդէն, այս ամիսուան միջոցին ուէ երկարութեամբ ժամանակամիջոցին կրնաս աւելնել ենթարկել ինքզինքդ: Բայց ճշնշիչ կերպով խոնար եւ խեղդիչ օդին՝ հր-

բեք մի կենար արեւին մէջ: Տաք եղանակին խնայողութեամբ կեր թեթեւ կերակուրներ, որոնք պարունակեն սաւառ, առատ պտուղ եւ յիւն: Առատօրէն ջուր [ոչ թէ սոսոցախառն] խմէ: Թէյը եւ խահուէն աւելի տաք խմել լաւ է քան թէ պաղ: Գաղջ ջուրով լոգանքը աւելի ազդու է քան թէ պաղ տուլ: Կաթով ջուրերը խափառուով սրբէ եւ թող որ մնացածը շոգիանալով չորնայ: Թոյլ, ծակոտ, եւ քիչ կամ թեթեւ զգեստ հագիր:

ՕԿՈՍՏՈՍ.— Մենք սորվեցանք թէ լաւ օգուորուած մարթը պաղին կը դիմանայ. անիկա փափուկ եւ պաշտպանուած մորթէն աւելի տաքին ալ լաւ կը դիմանայ: Եթէ տարուան այս տեսնին արեւի լաւ լոգանք մը առած գտնուիս արդէն Օգոստոսի տաքերը փոխանակ քեզ թոյլ եւ ձանձրացած գտնելու՝ հանգարտ եւ կենսալից պիտի տեսնեն: Ուշադրութիւն ըրէ որ բոլոր խմածներդ եւ կերածներդ լաւ սառուցարանի մը մէջ պահուին: Աղտոտ ճաշարաններու կամ ճամբու կայաններու մէջ գիւրաւ աւրուող կերակուրներ մի ուտիր: Կասկածելի ջուր մը առանց եռացնելու մի՛ խմիր: Այս կերպով ազատ պիտի մնաս աղիքներու ամառնային հիւանդութիւններէ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ.— Բոլոր տարին նկատի առնելով այս ամիսուան մէջ է որ առողջութեան պահեստի ոյժերդ բարձրագոյն կէտին վրայ կը գտնուին, քանզի քու արեւէն ստացած անդրամանիշակագոյն ճառագայթներու ոյժը, որ ախտերու դէմ քեզ կը պաշտպանէ, քու մարմնիդ մէջ ամբարտած է: Ասկէ ետքը արեւի լոյսը այս անտեսանելի ճառագայթներու տեսակէտէն աստիճանաբար կը տկարանայ: Բայց քու պահեստի ոյժդ լաւ պահելու համար կարելի եղածին չափ մինչեւ եղանակին վերջը շարունակէ կատարել քու արեւի լոգանքներդ:

ՀՈԿ.— Աշնան միջոցին անդր-մանի-
շակագոյն ճառագայթները կ'անհետա-
նան. և մօրթի մարգանքի միջոցաւ ա-
ռողջութեան պահեստի ոյժ շինելու պա-
տենութիւնները կ'աւելնան: (Հոս յօդ-
ուածագրին նկարագրածը մեր Նոյեմբե-
րին կը համապատասխանէ):

ՆՈՅ.— Մօրթի մարգանքին շարու-
նակէ. պաղ և մեղմ օդի փոփոխակի յա-
ջորդութիւնը մօրթի կը վարժեցնէ օդի
փոփոխումներուն յարմարելու: Վառա-
րանդ մի բանար մինչև որ դուրսի օդը
Ֆարենայթ 60ի չիջնայ: Եթէ մինչև
հիմա յիշուած կէտերուն համեմատ շար-
ժած ես ձմեռնային պաղէն վախճալու
պատճառ մը չունիս: Միշտ զգուշացիր
փափկութեան վարժուելէ. շատ թանձր
ծանր մի հագուիր. լաւ վերարկու մը
(փարաէսիւ) բոլոր պէտքը կը գոհացնէ
դուրս ելած պահուդ: Երբեմն երբեմն
սենեակդ բանալով ներսի օդը զովացնե-
լու սկսէ:

ԴԵՆՏԵՄԲԵՐ.— Օդին նոյն իսկ շատ
պաղ եղած ատենը կ'արժէ որ միջա-
նի վայրկեանի համար առտուն, կէս-
օրին, և երեկոյին առանց գլխարկի եւ
վերարկուի դուրս ելլիս, որպէսզի պաղ
հովիկը մօրթիդ հասնելու ազատ ըլլայ:
Առանց իրապէս պաղ առնելու որչափ
ատեն որ պաղը զգաս այնչափ ալ կ'օգ-
տուիս:

Եթէ հաւատարմօրէն այս հրահանգ-
ներուն համեմատ շարժիս ձմեռն ու գա-
րունը քեզի համար կենսատու, ողբերիչ
եղանակներ պիտի ըլլան փոխանակ վը-
տանի պահ մը ըլլալու:

Թրգ. Տ. Ճ. Խ.

Պէտք է յիշել սակայն որ այս յօդ-
ուածը նիւ Եօրքի գօտին նկատի առնե-
լով զրուած է ոչ թէ Սուրիան, ուր ա-
շունը ուշ և գարունը կանուխ կ'սկսի և
ձմեռը կարճատեւ կ'ըլլայ:

Ծնթ. Թրգչ.

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՆՔ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սուրբիոյ և Լիբանանի Հայ Աւետ. Մի-
ութեան տարեկան համաժողովը այս
տարի տեղի պիտի ունենայ Պէյրութի
մէջ, Ապրիլ 23-30 ի միջոցին:

Այս համաժողովը պիտի պարունակէ
Միութեան և Միսիօնարութեան առան-
ձինն ժողովները, որոնք ընդհանրապէս
ամէն օր կէսօրէ հոգը տեղի պիտի ու-
նենան, և յիշեալ երկու մարմիններու
խառն ժողովները՝ որոնք առտունները
պիտի կատարուին:

Հետեւեալ նիւթերու մասին ճառեր
պիտի կարդացուին:

1. Պենտեկոստէի Պատմական Իրո-
դութիւնները:

2. Ս. Հոգին և Վերստին Ծնունդը:

3. Ինչպէ՞ս կրնանք Ս. Հոգին ստա-
նալ:

4. Ս. Հոգին հովուին կեանքի՞ն և
գործին մէջ:

5. Ս. Հոգին՝ Մեր Եկեղեցիներուն
կեանքին և Գործին մէջ:

6. Ս. Հոգին և Սրբազործում:

7. Ս. Հոգին և Աւետարանչութիւն:

8. Աւետարանչական Ծրագիր մը այս
տարուան համար:

Նաև ժամանակ պիտի տրուի մասնա-
ւոր բարեպաշտական նուիրման ժողով-
ներու, և ուրախ ենք ծանուցանելու թէ
Վեր.Մ. Փափազեան, որ ներկայիս Մեր-
ձաւոր Արևելքի Հայ Աւետ. եկեղեցինե-
րը կ'այցելէ, ժողովներուն մէջ ներկայ
պիտի ըլլայ, ամէն օրուան մէկ մասը պի-
տի գրաւէ ժողովին մտածումները գէպի
հոգևոր իրերը առաջնորդելու մէջ: Ժո-
ղովին վերջին օրերը, Ապրիլ 29 և 30,
բոլորովին պիտի յատկացուին գործիչ-
ներու անձնական կեանքին այսպիսի մէկ
ուսումնասիրութեան:

Ժողովին ամենակարևոր մասերէն

մէկը պիտի ըլլայ եկեղեցիներու տեղեկադրութեանց ընթերցումը, որ տառաջին օրուան աւետուան վերջին մասը պիտի գրաւէ: Ամէն մէկ եկեղեցի պէտք է որ իր տեղեկատուութիւնը գրաւոր կերպով պատրաստած ըլլայ: զրաւոր տեղեկատուութիւնները վիճակագրական ունէ բան երբեք պէտք չէ պարունակեն, այլ տշնպիսի կենսական և կարեւոր տեղեկութիւններ սրտնք եկեղեցիները իրարու պիտի մերձեցնեն մեր հասարակաց հարցերուն հասկցողութեան և կարեկցութեան մէջ: Իւրաքանչիւր տեղեկագրութեան բացարձակ տեսողութիւնը հինգ վայրկեան պիտի ըլլայ միայն, և այն պէս պէտք է գրուի որ այդ ժամանակամիջոցին ան կարենայ կարդացուիլ: Գըրաւոր ճառերուն սահմանն է 15 վայրկեան:

Ամէն մէկ եկեղեցի Մարտ 31էն առաջ պէտք է իր պատուիրակներուն և քարոզիչին անունները զրկէ Գործադիր Մարմին:

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈԳԻՆ

Սքրուճ խորունկ քունի մէջ սաստիկ կը խռկար. յանկարծ արթնցաւ ու հլաւ անկողնոյն մէջ նստեցաւ. միտքը ցրտած վիճակի մէջ էր, աշխատեցաւ իր խորհուրդները մէջտեղ բերել: Ժամը մէկը զարկաւ. այն ատեն Սքրուճի միտքը եկաւ ինչ որ Մարլիի ոգին իրեն ըսած էր, ճիշդ այդ ժամուն երկրորդ ոգին պիտի դար: Արդեօք այս անգամ ո՞ր պատուհանին վարագոյրը ետ քաշելով ներս պիտի մտնէր. ու Սքրուճի միտքը փուշ փուշ ըլլալ սկսան: Զգային նոպայի մը մէջ եղողի պէս անկողնէն վար ցատկեց և իր ձեռքովը բոլոր պատուհաններուն

վարագոյրները վերցուց, ու նորէն գնաց պառկեցաւ, աչքը ուշադիր չորս կողմը դարձնելով. այս անգամ որոշած էր յանկարծակիի չզալ:

Այ՛, այս անգամ կը խորհէր թէ ամէն պատահականութեան դէմ պատրաստ էր... սակայն... Ժամը մէկը զարկած, հինգ բոպէ, տասը բոպէ, տասներեք բոպէ անցած ալ էր, ու տակաւին ոգին չէր գար: Մէկէն ի մէկ աստափի դող մը եկաւ վրան, երբ որոշակի զգաց անրնական լոյսի մը արտառոց գոյութիւնը, ինչո՞ւ լոյս էր, ժամը մէկին, գիշերոյն այդ պահուն այս պատար լոյսը ինչպէ՞ս կարելի էր, ուրկէ՞ կուգար, գուցէ ոգին՝ որուն կ'սպասէր՝ այն ինքն այդ լոյսին կերպարանքովը կը ներկայանար...: Ու ստիկումը կրկնապատկուեցաւ: Այդպիսի պարագայի մը ատի Սքրուճ ըրաւ ճիշտ ինչ որ դուն կամ ես պիտի ընէինք. ջանաց հասկընալ թէ ուրկէ կուգար այդ լոյսը, ու շաղկապեալ չորսգին նայելէ վերջ ան համոզման եկաւ թէ լոյսը քովի սենեակէն կուգար, ուստի կամացսէկ մը անկողնէն վար իջաւ, հոգաթափներն ոտքն անցուց, ու շունչը բռնած դրան մօտեցաւ: Ծիշտ այն վայրկեանին, երբ Սքրուճի ձեռքը դրան զպած էր, տաքօրինակ ձայն մը ներսէն իր անունը տալով՝ հրամայեց որ ներս մտնէ: Սքրուճ հնազանդեցաւ ու ներս մտաւ:

Սքրուճ ներս մտաւ, աչքերը գետին խոնարհած կեցաւ անոր առջեւ: Ու թէեւ հսկային զէմքը քաղցր ու նայուածքը բարի էր, բայց Սքրուճ չէր համարձակեր անոր աչքերուն նայիլ:

«Էս ներկայ մշտնդին ոգին եմ, ինծի՛ նայէ», ըսաւ ոգին:

(Շարունակելի)

صاحب الامتياز و مدير المسنول

قسيس قريه هاروتونيان